

ԱՄԲՐՈՍԻՈՍ ԹԵՍԵՈՍԻ «ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ»  
ԳՐՔԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՕՐԻՆԱԿԻ  
ՎԵՐԱՇԱՐՎԱԾ ԹԵՐԹԵՐԸ

ՎԻՐՋԻԼ ՍՏՐՈՄԱՅԵՐ

Ա. Ամբրոսիոսն ու իր գիրքը

Ամբրոսիոս Թեսեսոսը (Ամբրոջիո Թեսեսո. 1469-1540) ծնունդով Պավիայից էր, սերում էր ազնվականական Ալբոնեղի տոհմից: Իր հայրենի քաղաքում և Միլանում նա իրավագիտություն է սովորել, այնուհետև 1494 թ. անդամագրվել է Ավգուստինյան միաբանությանը: Ամբրոջը կյանքի ընթացքում մեծ հետաքրքրություն է համակված է եղել արևելյան լեզուների՝ եբրայերենի, ասորերենի, ղալտերենի, սամարերենի, արաբերենի և հայերենի նկատմամբ (նրա գործերի մեջ պարսկերենից և թուրքերենից օրինակներ չկան): Սերտ կապեր է ունեցել նույնաբնույթ հետաքրքրություններ ունեցող եվրոպացի գիտնականների, ինչպես նաև՝ Հռոմի պապի հովանավորությունը ձեռք բերելու ձգտում ունեցող արևելյան քրիստոնյա ժողովուրդների հետ: Ամբրոսիոսը մեծ դեր է ունեցել նաև գրքեր հրատարակելու համար նշված լեզուների տառատեսակների ստեղծման գործում (Ֆոնմաջելլի):

Սեմական լեզուների նկատմամբ ունեցած հետաքրքրությունից բացի, Ամբրոսիոսը նաև հավաքել է բազմաթիվ հայերեն բնագրեր և թարգմանություններ արել հայերի սուրբ գրքերից: Նա անդամ չգիտեր, որ հայերենի դեպքում գործ ունի հնդեվրոպական լեզվի հետ, սակայն նրա միակ տպադիր դործը՝ XVI և XVII դարերում բազմիցս հիշատակվել է որպես ո՛չ - հայազգի ուսումնասիրողների համար հայերենի ամենանշանակալի աղբյուր:

Ամբրոսիոսի գործի ավարտից դեռևս մեկ տարի առաջ (1538 թ.) նրա արևելագետ ընկեր Գիյոմ Պոստելը նրա տառատեսակներն օգտագործել է արևելյան տասներկու լեզուների նվիրված իր գրքույկը հրատարակելու

1 Introductio in Chaldaicum linguam, Syriacam atque Armenicam et decem alias linguas, characterum differentium Alphabeti circiter quadraginta, et eorumdem invicem conformatio; mystica et chabalistica quamplurima scitu digna. Ex descriptio ac simulachrum Phagoti Afrani. Teseo Ambrosio ex Comitibus Albonessii J. U. Doct. Papien. Canonico Regulari Lateranensi, Ac Sancti Petri in Coelo Aureo, Papiae Praeposito, Authore. MDXXXIX [1539] Linguarum vero u Alphabetorum nomina sequens pagella demonstrabit (excudebat J. M. Simoneta, sumptibus u typis authoris libri).

Համար<sup>2</sup>: Չնայած այս հանգամանքին, Ամբրոսիոսի աշխատությունը շատ ավելի տարողունակ է և պարունակում է յուրաքանչյուր լեզվի պատմաբանասիրական հետազոտություն, նաև՝ ուսումնասիրված բոլոր լեզուների լատինատառ տառադարձությունը: Գործն ավարտվել է Ամբրոսիոսի մահվանից մեկ տարի առաջ. այն ավելի շուտ աշխատությունների ժողովածու է, քան գիտական մեծագրություն: Ամբրոսիոսի նշանակալի դործերը ոչնչացվեցին այն ժամանակ, երբ ֆրանսիացիներն ավերեցին Պավիան: Նրան հաջողվեց փրկել միայն իր տառատեսակները, ապա ամեն ինչ վերսկսեց Ֆերարայում: Կյանքի այդ վերջին տասներեք տարվա ընթացքում էլ Ամբրոսիոսն ստեղծեց այս կոթողային աշխատությունը: Ապա այն հրատարակելու նպատակով վերադարձավ Պավիա (Վենետիկ, 1895; Ոսկանյան, 1988):

Ամբրոսիոսի գիրքը եզակի է. չնայած հրատարակվել է բավական ուշ (1539 թ.), սակայն համարվում է վաղ շրջանի գիրք: Այս ուսումնասիրությունը համար օգտագործել ենք Ձիկագոյի Նյուբերի գրադարանի՝ հազվագյուտ այբուբեններ ունեցող վաղ շրջանի գրքերի հավաքածուի օրինակը, որ այդ հարուստ ժողովածուի եզակի նմուշներից է: Նրա գրքի օրինակներ կան Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան վանքերում, Մաշտոցյան Մատենադարանում, Պավիայում, Փարիզում, Բուդապեշտում, Օքսֆորդում և Բրիտանական գրադարանում<sup>3</sup>: Քանի որ մի շարք լեզուների (հատկապես՝ արարերենի) այբուբեններն Ամբրոսիոսի գրքի մեջ ավելացվել են ձեռքով, ուստի Նյուբերիի օրինակը համեմատել ենք Ս. Ղաղարի, Պավիայի և Վիեննայի օրինակների հետ: Համեմատության ընթացքում հայտնաբերած բոլոր տարբերությունները գրառել ենք մեր աշխատանքային օրինակի մեջ:

Ամբրոսիոսի գիրքը գրացուցակներում սովորաբար հիշատակվել է իր ունեցած բազմաթիվ իւրհրգանշական (կաբալիստական) այբուբենների և հմայագրերի ու զաղտնագրերի, ինչպես նաև՝ իր իսկ հորեղբոր ստեղծած ֆագոտ (*phogotus*) անունով հնագույն երաժշտական գործիքի նկարագրություն և պատկերի համար: Այս վերջինի պատճառով գիրքն ավելի հաճախ

2 Հակառակ հեղինակի այս կարծիքի, Ռ. Իշխանյանն առավել քան համոզված է, որ Գուլիելմոս Պոստելի «Linguarum duodecim characteribus differentium alphabetum» գրքի հայերեն տառերը փայտափորագիր են, ուստի և դա դեռևս «իսկական տպագրություն է» (տե՛ս - Հայ գրքի պատմություն, հ. 1. Հայ գիրքը 16-17-րդ դարերում, Երևան, 1977, էջ 297, այսուհետև՝ Ի շ ի ա ն յ ա ն). նույնն է արձանագրված նաև՝ Ո ս կ ա ն յ ա ն, էջ 779. Իշխանյանը (ն. տ.) նաև հատուկ շեշտում է, թե Պոստելն «Ամբրոսիոս Թեսեսուսից «նվեր է ստացել հայերեն և քաղղեերեն «Հայր մեր»-ի բնագրերը և արևելյան մի քանի լեզուների տպատառեր (բայց ո՛չ հայերեն)». ծան. խմբ.:

3 Օրինակներ կան նաև Փարիզի Մազարինի և Արսենալի գրադարաններում, Մյունխենի քաղաքային, Նյու Յորքի հանրային, Հարվարդի համալսարանի, Պարմի Պալատինի և Վիեննայի Ազգային, այլև՝ Մանուկ Բարիքյանի (Օքսֆորդ), Զարեհ Պտուկյանի (Նյու Յորք) և Ալբերտ Նալբանդյանի (Սան Ֆրանցիսկո) անձնական գրադարաններում. տե՛ս Ո ս կ ա ն յ ա ն, էջ 780 - ծան. խմբ.:

նշվել է երաժշտագիտական, քան՝ պատմական լեզվաբանությունը վերաբերող գրքերի ցանկերում:

Օրորոցային (incunabula) տպագիր գրքերի հետազոտումը չպետք է անել այնպես, ինչպես արվում է համեմատաբար ուշ տպված գրքերի քննությունը: XVII դարից մինչև օրս տպագիր նյութը համարվել է անփոփոխական, սակայն տպագրության սկզբնական շրջանում տպագիր գրքի բնագիրն ավելի հաճախ գիտվում էր այնպես, ինչպես գարեր շարունակ գիտվել են ձեռագրերը. տպագիր օրինակների մեջ հաճախագեպ փոփոխությունն անելն ավելի շուտ օրինաչափ, քան թե՛ արտառոց երևույթ էր: Մենք շատ բան սովորեցիք նշանավոր հնագրավաճառ պարոն Սմիթսկամպից, որի ունեցած գրացուցակներն արևելագիտական օրորոցային գրքերին վերաբերող տեղեկությունների հարուստ շտեմարան են: Ամբրոսիոսի գրքի նրա վաճառած և Մատենագարանի ստացած օրինակի վերաշարված թերթերն էլ (61–92) առիթ եղան պատրաստելու այս ուսումնասիրությունը<sup>4</sup>:

Ամբրոսիոսի «Ներածություն» (Introductio...) Մատենագարանի (Լատ. N 1062) և Նյուլբերիի օրինակների տարբերությունները շատ և միանգամայն տարակուսական են: Առաջինում շատ թերթեր վերաշարված են, իսկ լատիներեն բնագիրը սրբագրված է: Միաժամանակ, արևելյան լեզուներից բերված օրինակների մեջ սպրգել են բաղմամբիվ սխալներ ու բացթողումներ, որոնք գրքի վերջում (թ. 214–5) տպված՝ վրիպակ-ուղղումների ցանկի համեմատ զգալիորեն շատ են:

Մատենագարանի օրինակը 1990 թ. Իտալիայից ստացված անանուն նվիրատվություն է: Համեմատելու նպատակով օգտագործել ենք նույն գրքի՝ Նյուլբերի գրադարանում պահվող օրինակը, որ իր հերթին համեմատվել և ծանոթագրվել է Ամբրոսիոսի հայրենի Պավիա քաղաքում և Վենետիկի Ս. Ղազար կղզու Մխիթարյան Միաբանության գրադարանում պահվող օրինակների հետ: Նրանցից ոչ մեկը Մատենագարանի օրինակի առանձնահատկությունները չունի: Նաև՝ Հունգարիայի ազգային գրադարանի օրինակի մեր թուղցիկ դիտումը և Փարիզի օրինակի մասին Յ. Սեքրեի ծանոթագրությունները հուշում են, որ այս երկուսը նույնպես այդ հատկանիշները չունեն:

Մատենագարանի օրինակն ուսումնասիրելու սկզբում քիչ ուշադրություն էի դարձրել լատիներենի բնագրային տարբերություններին, որովհետև ինձ առանձնապես հետաքրքրում էին արևելյան լեզուներին վերաբերող հատվածները, որոնք նույն գրքի այլ օրինակների համեմատ մեծ շե-

4 Գիրքը թերթակալված է (ո՛չ էջակալված), ուստի և այս շարադրանքի մեջ թերթահամարները և էջահամարները նշանակված են այնպես, ինչպես արվում է ձեռագրերի մասին գրելիս (թ. 62, էջ 62ա, 63բ և այլն) – ծան. խմբ.:

5 Գիրքը գրանցված է Մատենագարանի հանգուցյալ փոխտնօրեն Բաբկեն Զուգասյանի՝ Միլանում Հրանտ Բամպակյանից ստացած գրքերից հետո. երևի սա նույնպես ստացած լինի Միլանում. – ծան. խմբ.:

ղումներ ունեին, այլև՝ նրանց մեծ մասը սխալներ էին (հաճախ՝ վրիպակներին ցանկում առկա, բայց ո՛չ միայն այդչափ). կարծում էի, որ գրքի մեջ վերատեղադրված թերթերը «Ներածության» ավելի վաղ և երևի չհրատարակված տարբերակն են, որի մնացորդներն Ամբրոսիոսի մահվանից հետո օգտագործել էին գրքի հետագա օրինակները լրացնելու համար (ըստ այսմ՝ բնականաբար, ենթադրելի էր, որ անորոշ մի պատճառով տպագիր մամուլների պատրաստի ինչ-որ քանակ վնասվել էր):

Այս ենթադրությունը Սմիթսկամպը քննադատել է «Ներածության» իր օրինակի վաճառքի առիթով գրած նկարագրություն մեջ (Սմիթսկամպ, 1997): Նա կարծում է, որ վնասված մամուլները տպվել են առանց Ամբրոսիոսի վերահսկողության և խորհրդի, և որ անգամ դժվար է կռահել, թե ինչու են փոխվել տառաչափը, թղթի տեսակը և գրադաշտի չափը: Այս փոփոխությունները, անշուշտ, այդպիսով ի նորո կաղմված գրքերին որևէ արժեք չեն ավելացրել:

«Մեր օրինակի անսովոր մի յուրահատկությունն առկայությունն է բնագրի ամբողջապես վերաշարված-վերատեղադրված մասի՝ թթ. 61–97, որ չափսով ամբողջ գործից ավելի փոքր է. գրադաշտը՝ ներառյալ կապող (հաջորդ էջի առաջին) բառերը, 151 x 95 մմ է, հակառակ սովորական 172 x 108 մմ-ի: Երկու տարբերակների միջև եղած բնագրային տարբերությունների հետ միասին, ենթադրելի են վերաշարման այլ սխալներ, որոնք ասորերենում հավանաբար սրբագրված չեն, սրա պատճառը չբացատրելով հանդերձ, սրանից հետո մենք կարող ենք ենթադրել, որ հավանաբար Ամբրոսիոսի մահից՝ 1540 թ. հետո, տպագրիչ Սիմոնետան ուներ վերաշարված ութ թերթ՝ (մամուլ)՝ խոտան ինչ-որ քանակ լրացնել-պատրաստելու համար: Մինչ բուն դիրքն ունի խարիսխի և գլխարկի (նման՝ Բրիկեի N 496-ին և N 3439-ին) պատկերներով լուսագրոշմներ, նոր թերթերը (մամուլները) տպված են Բրիկեի (N 1490 և հետևյալ՝ շատ մոտավոր) ցլագլուխ կոչված թղթի վրա» (Սմիթսկամպ, 1997):

Հետագա շարադրանքի մեջ մանրամասն կնկարագրենք Մատենադարանի Լատ. N 1062-ում գտնվող՝ մեր գրանցած տարբերությունները, որոնք այժմ ինձ հարկազրույց են հավատալու, որ կորած (պակասող) էջերը վերաշարելու և տպագրելու պ. Սմիթսկամպի վարկածը շատ ավելի հավանական է, քան իմ նախկին ենթադրությունը՝ թե գրքի առաջին հրատարակությունն այնքան սխալաշատ էր, որ Ամբրոսիոսը որոշել է սկզբից մինչև վերջ վերատպել այն (Ստրոմայեր, 1996):

Այսպես, գրքի թե՛ մեկ, թե՛ մյուս տարբերակում առկա են նույն սխալները, որոնք հիմք են տալիս ենթադրելու, որ այն կրկին չի հրատարակվել: 27-րդ թերթը սխալմամբ համարակալված է 47, իսկ 214-ը՝ 114: Վե-

6 Գիրքն ունի 215 + 1 (չհամարակալված) թերթ. պրակները 4 թերթանոց են, ընդամենը՝ 54 պրակ (216 : 4 = 54). Հոդվածի քննությունն այսօր գրքի ութ տպագրական թերթն (մամուլ, պրակ) է. ծան. խմբ.:

րաչարված 61–92 թերթերում, մյուս օրինակների համեմատ, լատիներեն բնագիրը սրբագրված է, որ և հիմք է տալիս ենթադրելու, թե այս թերթերը, որ է՝ Մատենադարանի տարբերակը, ավելի ուշ են առաջացել: Իսկ արևելյան լեզուներով նմուշների մեջ առկա սխալները կարելի է բացատրել Ամբրոսիոսի մահվամբ, որովհետև նրա մահով Սիմոնետա տպագրիչը զրկվեց իր միակ հոսսալի սրբագրիչից:

Վերաչարված 61–92 թերթերի սխալներից բացի, N 1062-ը վերատեղադրված նկարագարը թերթեր ունի նաև գրքի ամբողջովին բնագիր (չարվածք) ունեցող մասում՝ թթ. 178–180: Այս թերթերի 178բ և 179ա էջերում շրջանակված են Փազոտ երաժշտական գործիքի նկարներ. կան նաև բառապաշարի բազմաթիվ տարընթերցումներ, որ հետաքրքիր կլինի համեմատել գրքի ավելի ընդարձակ տարբերակի հետ՝ պարզելու համար, թե կա՞ն արդյոք այս երկու յուրահատուկ էջի երկու կամ ավելի տարբերակներ, որոնք Ամբրոսիոսի կրթության ու ընտանիքի մասին կարող են պատմել իրարից տարբերվող մանրամասներ: Տարընթերցումների էությունն, ինչպես ցույց է տրված ստորև, այն է, որ հանված է Ամբրոսիոսի հովանավորներից մեկի՝ Անդրեաս Կալվոս Միլանցու անունը (և ինքնությունը): Ինչևէ, պարոն Սմիթսկամպը կարծում է, թե նրա անվան վերացումը կարող էր կատարվել էջի ո՛չ ճիշտ չափման հետևանքով (մասնավոր զրույցից):

Ջարմանալի՞ է, որ նկարագարը էջերի տպադաշտը սովորականից ավելի լայն է (115 մմ-ի փոխարեն 130 մմ) և որ իմ նկարագրած օրինակներից մեկի նման՝ եզրին կիպ կտրված լինելու պատճառով բնագիրը (գրադաշտը) նույնպես կարող էր հեշտությամբ կտրվել: Հնարավոր է՝ Մատենադարանի օրինակի բնագիրն ավելի պակաս լայնքով է դրվել այն բանից հետո, երբ տպագրիչը սխալը պարզել է թերթերի՝ արդեն տպված լինելուց հետո: Հետևաբար, հեղինակն ուղղված թերթերի վրա կրճատել է բնագրի որոշ մաս՝ ըստ երևույթին հաջորդող արդեն տպագրված էջերին հասցնելու կպցնելու համար, ուստի և որոշել է պակասեցնել որոշ անձանց վերաբերող մանրամասներ: Ինչ էլ եղած լինի սրա պատճառը, կարծում ենք՝ այստեղ առնչվում ենք վերաչարված 61–92 թերթերի հետ կապ չունեցող երևույթի հետ:

Մատենադարանի N 1062-ի պատկերագարը էջերի իրական չափերը, ի տարբերություն նրանց նախորդող և հաջորդող էջերի, հետևյալն են. 178ա և 179բ պատկերագարը էջերն ունեն սովորական չափսեր՝ լայնությունը 145 մմ, երկարությունը՝ 205 մմ. արտաքին լուսանցքը՝ 25 մմ, ներքինը՝ 17,5 մմ (դրադաշտի լայնքը 102,5 մմ է), վերին լուսանցքը 7,5 մմ է, ստորինը՝ 30 մմ: 178բ և 179ա նկարագարը էջերը պետք է մասամբ նկարագրվեն առանձին-առանձին, որովհետև վերջին էջի տպագրությունը նախորդից մի փոքր տարբեր է. 178բ-ի նկարի լայնքը 95 մմ է, երկայնքը՝ 160 մմ, նկարի կողքի շարվածքն ուն 25 մմ լայնք, նկարի և շարվածքի միջակա լուսանցքի լայնքը 5 մմ է, շարվածքի և թղթեզրի միջև եղած լուսանցքի

լայնքը 7,5 մմ է (տպագաշտի լայնքը՝ նկար և շարվածք միասին, 125 մմ է). արտաքին եզրի և նկարի շրջանակի միջև կա 40 մմ լայնք, նկարի և ներքին եզրի (կարվածքի, հիմքի) միջև 10 մմ է. 179ա էջն իր գիմացիներից մի փոքր տարբերվում է, որովհետև թղթեզրի և բնագրի շարվածքի միջև առկա արտաքին լուսանցքը 10 մմ մոտ է արտաքին մասում և թեքվելով՝ հիմքում գառնում է 6 մմ:

Ստորև ներկայացնում ենք վերաշարված թերթերում հայտնաբերված վրիպակների մանրամասն ցանկը:

#### Բ. 61–92 թերթերը

Տառաչափի, էջաչափի և թղթի տեսակի տարբերությունները նկարագրել է Սմիթսկամպը (1997 թ. տե՛ս վերը): Սակայն կարիք կա մանրամասն ներկայացնելու երկու տարբերակների այս թերթերի բազմաթիվ այլ բնագրական տարբերությունները:

Նկատված վրիպակների ցանկի երեք ու կես էջի մեջ (թթ. 214 – տպված՝ 114, և 215) 61–92 թերթերում գտնվող սխալները բռնում են 214բ էջի երկու երրորդը. սա ամբողջ գրքում առկա սխալների ամենամեծ հատվածն է: Գրքի վերաշարված հատվածում կան մեծ քանակությամբ սխալ գասավորած էջեր, որոնց ընթերցման ճիշտ հերթականությունը հետևյալն է. 65ա, 67բ, 68ա, 66բ, 67ա, 65բ, 66ա, 68բ, 69ա: 69բ էջի գլխագիրը (վերնախորագիրը) տպված է շքեղ՝ հայելային աբտացումամբ, իսկ 71-րդ թերթը համարակալված է 68: Հարկ է նաև նշել, որ Ամբրոսիոսի գրքի Մատենադարանի տարբերակը զուրկ է ձեռքով գրված բոլոր այբուբեն-նմուշներից:

Թերթ 61. լատիներեն շարագրանքը սրբագրված է. 61բ՝ գալմատերեն երեք տառի տեղը մնացել է բաց՝ ձեռքով չի լրացվել:

Թերթ 62. լատիներենն ուղղված է. դալմատերեն օրինակները կրկին պակասում են:

Թերթ 63. երկու տարբերակների միջև էական տարբերություն չկա:

Թերթ 64. լատիներենը սրբագրված է, սակայն ասորերենը խիստ փոփոխված է. էջերը վերաշարելիս ասորերենից մեջբերված դարձվածները դասավորվել են այնպես, որ երկու նախադասության սկիզբները դրվել են դարձվածների վերջում և հակառակը. մինչդեռ նրանց գրադարձությունը ճիշտ հերթականություն ունի: Կարճ ասած, այս էջերը սովորողներին ավելի շատ պիտի շփոթեցնեն, քան՝ օգնեն:

Թերթ 65. առաջին (աջ) էջի ասորերենն անսխալ է, սակայն դարձերեսինը (ձախինը)՝ խառնաշփոթ. կրկին՝ նախադասությունների սկիզբն ու վերջն իրենց տեղերը փոխել են. լատիներեն բնագրի ուղղումներ չեն արվել:

Թերթ 66. աջ էջ՝ ինչպես նախորդ էջում, ասորերենի և արաբերենի տողերը խառնված են իրար, սակայն ո՛չ պակաս բարդ եբրայերենի տողերը

շարված են միանգամայն ճիշտ: Ո՛չ լատիներեն բնագիրն է սրբագրված, ո՛չ էլ գրադարձութունը: Ձախ էջ՝ դպտերեն երեք տառերը ձեռքով չեն գրվել՝ տեղը բաց է մնացել:

Թերթ 67. լատիներենը սրբագրված չէ, չգրված է մնացել դպտերեն մի տառ:

Թերթ 68. աջ էջ՝ գալմատերեն տառը կրկին չի գրվել. ձախ՝ երրայեքեն հստակ գրված «aniot»-ը գրադարձության մեջ «anior» է. «aniot» գրված է Նյուբերիի օրինակում: Ասորերենը կրկին խառնաշփոթ է:

Թերթ 69. լատիներենի սրբագրումները մուծվել են շարվածք. դալմատերեն տառը կրկին չի գրվել:

Թերթ 70. այստեղ ամեն ինչ կարգին է:

Թերթ 71 (գրված՝ 68). աջ էջ՝ երրայեքենի գիմնի, բեթ և փե տառերը գլխիվայր են դրված, մինչ Նյուբերիի օրինակում դրանք ճիշտ են շարված. ձախ էջ՝ գրագարձված նյութը սրբագրված չէ և հին շարվածքի «Baphratho»-ն վրիպամբ գարձել է «Baphrato»: Մատենադարանի օրինակի այս էջի բոլոր գլխատառ P-երը թավ են, իսկ էջավերջի «vīm» կապոդ բառը սխալմամբ գատված է երկկետով (միջակետ):

Թերթ 72. աջ՝ գալմատերեն տառը չի գրվել. ձախ՝ թե՛ երրայեքեն և թե՛ ասորերեն գրադարձությունները սրբագրված չեն, իսկ ասորատառ արաբերեն բնագրի վերջնամասը հայտնվել է սկզբում, մինչ սկիզբը տեղագրված է վերջում: Երրայեքենը շարված է առանց բառանջատման ճշտությանն ուշք դարձնելու: Նյուբերիի օրինակում այս բոլոր սխալները չկան:

Թերթ 73. աջ երես՝ մակեդոներեն «Ալելուլյա» բառը չկա. ձախ՝ գալմատերեն տառերն իսպառ բացակայում են:

Թերթ 74. աջ երես՝ գալմատական տառերը կրկին չկան. ձախ երես՝ չկա երրայեքենի ո՛չ սրբագրված և ո՛չ էլ «սխալ» գրադարձութունը. չկան նաև արաբերեն, դպտերեն, մակեդոներեն և գալմատերեն մեջբերումները: Իսկ դալմատերեն տառանվան սրբագրումն անտեսված է:

Թերթ 75. աջ երես՝ հայերեն «Պ» տառանունը տպված է սխալ «B.e.»: լատիներեն բնագիրը սրբագրված չէ. և, որ ավելի զարմանալի է, ասորերենի գոմալ տառը բացակայում է, մինչ նրա մասին նշված է վրիպակների ցանկում: Նյուբերիի օրինակի այս էջը սրբագրված է: Ղպտերեն, հակոբիկյան, սամարերեն, մակեդոներեն, գալմատերեն և եթովպերեն տառերը գրված չեն. ձախ երես՝ արաբերենը չկա, տպագրիչը թողել է մի բաց մաս, ուր Նյուբերիի օրինակում հունարեն դարձված կա:

Թերթ 76. աջ երես՝ արաբերենը չկա. լատիներենը սրբագրված չէ. ձախ երես՝ այստեղ ևս լատիներենը սրբագրված չէ, իսկ սամարերեն, արաբերեն, եթովպերեն, գալմատերեն և մակեդոներեն տառերը ըացակայում են:

Թերթ 77. աջ երես՝ այբբենական նմուշները գրված չեն. ձախում նույնը:

Թերթ 78. աջ երես՝ ասորերեն բնագրի առաջին բառը չկա, փոխարենը՝ անճանաչելի (գրադարձությունն էլ չի օգնում) մի բառ ավելացված է վերջում. ձախում՝ լատիներենը սրբագրված չէ:

Թերթ 79. աջ երես՝ արաբերենը չկա, իսկ լատիներենը սրբագրված չէ. ավելին՝ մյուս օրինակների ճիշտ «significant»-ն այստեղ տպվել է սխալ «significat», որ ուղղվել է «significent», այսպիսով՝ անտեսելով վրիպակների ցանկում գրված ճիշտ ձևը. ձախում՝ հունարեն ձևը տպված է առանց բառասկզբի «սիդմա»-յի:

Թերթ 80. աջ երես՝ լատիներենը սրբագրված չէ. ձախ՝ եբրայերենի ձայնավորների նշանները չկան:

Թերթ 81. աջ երես՝ նորից եբրայերենի ձայնավորների նշանները չկան. ձախում՝ լատիներենը սրբագրված չէ:

Թերթ 82. աջ երես՝ «Ishhak»-ի փոխարեն կա «Irhak» վրիպակը, կան նաև կետադրական մանր տարբերություններ. ձախում՝ բնագիրը Նյուրբերի օրինակի համեմատ տարբերություններ չունի:

Թերթ 83. աջ երես՝ արաբերեն տառերը չկան, իսկ լատիներենը սրբագրված չէ. ձախում՝ հական տարբերություններ չկան:

Թերթ 84. աջ երես՝ նշանակալի տարբերություններ չկան. ձախում՝ պակասում են արաբերեն տառերը և նախադասությունները:

Թերթ 85. աջ երես՝ արաբերեն տառերն ու դարձվածները չկան, լատիներենի երկու սխալից միայն մեկն է սրբագրված. ձախում՝ արաբերեն բառերը չկան:

Թերթ 86. աջ՝ գրադարձության մեջ և Նյուրբերի օրինակում հանգիպող «յոդ» տառի փոխարեն եբրայերեն «վավ» տառն է. ձախում՝ «քոֆ»-ի փոխարեն գրված է «դալեթ»-ը:

Թերթ 87. աջ երես՝ բնագրի փոփոխություններ չկան. ձախում՝ չկան եբրայերեն տառերը:

Թերթ 88. աջ երես՝ բնագրի տարբերություններ չկան. ձախում՝ չկան արաբերեն տառերը:

Թերթ 89. աջ երես՝ բնագրի տարբերություններ չկան. ձախում՝ նույնը:

Թերթ 90. աջ երես՝ բնագրի տարբերություններ չկան. ձախ՝ գրադարձությունը սրբագրված չէ, ասորերեն տառերը կտրատված ու անկապակցելի են:

Թերթ 91. աջ երես՝ ասորերենի տառերը և բառերը հաճախ սխալ են շարված. ձախում՝ նույնը:

Թերթ 92. աջ երես՝ ասորերենն ունի տգեղ շատ մասեր. ձախում՝ նույնն է:



Ակնհայտ է, որ այս տարբերություններից ոչ մեկը գրքի ավելի վաղ օրինակների համեմատ կատարելագործում չէ: Չնայած որ գրաչարները գիտեին եբրայերենի գրութայն աջից ձախ ուղղությունը, սակայն նրանք նույն լավատեղյակությունը ասորերենի կամ ասորատառ արաբերենի նկատմամբ չեն ունեցել: Ամբրոսիոսն իր սիրելի ասորերենի նկատմամբ երբեք չէր հանգուրժի նման անփութություն: Հետևաբար, գրքի այս օրինակի սպազրման ժամանակ նա չէր կարող կենդանի լինել:

#### Գ. 178–180 թերթերը

Ստորև՝ ուղղանկյուն փակագծերում տալիս ենք Նյուրբերիի օրինակի բնագրական տարբերությունները՝ հիմնվելով գրքի պրն. Սմիթսկամպի օրինակի վրա (Սմիթսկամպ, մասնավոր գրույցից):

ա. Ամբրոսիոսի «Ներածություն» Նյուրբերիի օրինակը.

178ա [վերջին նախագասություն սկիզբը] *Non propterea Ottomarum [-rum կապը տարվել է հաջորդ էջ]*

178բ [բնագրի գրագաշտի սյունը ղուգահեռ է գիմացը՝ աջուսկերված Ֆագոտին] -rum *Luscinium Argentinum, quam musurgiam edidit, & ut ex epistola [Smit. in] fronte opis [Smit, operis] impressa clare patet, Andreae Calvo Mediolanensi dicavit, omnino taxavi, quod in illa instrumentum hoc [ձեռքի և պարզած ցուցամատի փոքր սլատկերը հետևում է «hoc»-ին և ուղղված է գեպի Ֆագոտի սլատկերը] non apposuerit, Cuius exemplum atque simulacrum a calchographo nostro impressum una cum prima praesentis introductorii libelli nostri parte (in quod dicti instrumenti descriptio satis abunde continetur.) Cum Bernardino meratae Me-*

179ա [բնագրի գրագաշտի սյունը Ֆագոտի սլատկերից աջ է] *diolanensi procuratori, seu Bibliopolae, qui locupletissimae Andreae Calvi librariae apothecae, in Ticinensi Urbe curam gerit, in Basileam Germaniae (pro ut dixerat) praefecturo, & enixe, ut Germanis calchographis ostenderet, efflagitanti, tradidisse, ut postmodum in patriam rediens secum reportaret, & mihi optima fide restitueret. Nescio qua ratione, quo ve [quove?/Smits. quove] astu Calvi procurator sive Calvus ipse mihi imposuit. Ber-*

179բ - *nardinus quippe brevi Papiam e Mediolano reversus, Calvo domino opus videndum tradidisse, & in Germaniam properanti consignasse retulit... Cum vero postmodum audivissem Calvum e Germania reversum, ad quartum idus mensis Septembris Mediolanum pergo, & in domum Calvum visito. Rogo praeterea ut librum meum restituat. Negotiorum se gestori suo Bibelio Germano, ex Basilea Frankfordium dixit deferendum dedisse, referendumque ac restituendum postea... [վերջին նախագասություն] Et ut antiquos in prae-[ կապ: sentia]*

180ա – *sentia ommittam, antiquorumque; monumenta praeteream...* [վերջին նախադասութիւնը] *Quantum tribus aliis Curtiis, & Stephano Ottono, & Andreae Bassignanae, praeceptoribus meis innocentissimis, Mangiariis, Folpertis, Iacobo Gualae, Gambaranae, [կապ: & viventi]*

180բ & *viventi adhuc apud nos, & idem Ius fideliter Interpretanti, Boscho debeat, scripta per eum volumina manifestent...* [վերջին նախադասութիւնը] *Nec in ea Caesarei Pontificiique; Iuris parte, quae in actione versatur, Ioannem Petrum Ferrarium, a me praetereundum [կապ: censuerim,]*

բ. Մատենադարանի Լատ. N 1062-գիրքը խիստ տարբերվում է սովորական Հապավումների յուրօրինակ գործածությամբ: Սրանց չենք անդրադառնա, քանզի նրանց գործածութիւնը գրքի երկու տարբերակում էլ մեծապես պայմանավորված է տողադրումով և էջագրումով:

178ա՝ Համարյա նույնն է, ինչ Նյուլբերիի տարբերակի Համապատասխան էջը. 178ա [վերջին նախադասութիւն սկիզբը] *Non propterea Ottomarum [կապ՝ rum]*

178բ [բնագիրը՝ 160 x 25 մմ նեղ սյունով գուղահեռ է դիմացը՝ աշխարհում պատկերված Փագոտին] -*rum Luscinium Argentinum, quam musurgiam edidit, in qua, tot musicae facultatis organorum genera, quot (ut reor) cognoscerem potuit, cumulatissime atque ordine multo recensuit, usumque; eorum eleganter tradidit, omnino taxavi, quod in ea instrumentum hoc [ձեռքի և պարզած ցուցամատի փոքր պատկերը հետևում է «hoc»-ին և ուղղված է դեպի Փագոտի պատկերը, սակայն այն զգալիորեն ավելի ցածր է, քան գրքի մյուս օրինակում:] non apposuerit, Cuius exemplum atque simulacrum a calchographo nostro impressum una cum prima praesentis introductorii libelli nostri parte (in quod dicti instrumenti descriptio satis abunde continetur.) [կապ՝ Cum]*

179ա [բնագիրը՝ 160 x 25 մմ սյունով Փագոտի պատկերից աջ է] *Cum diligenti cuidam Mediolanensi, procuratori, seu Bibliopolae, qui locupletissimae alteri mercatoris librariae apothecae, in Ticinensi Urbe curam gerit, in Basileam Germaniae (pro ut dixerat), praefecturo, & enixe, ut Germanis calchographis ostenderet, efflagitanti, tradidissem, ut postmodum in patriam rediens secum reportaret, & mihi optima fide restitueret. Nescio qua ratio.ne [sic], qua ve fiducia bibliopola ille, sive merca- [կապ՝ tor]*

Անդրեա Կալվոսի բնութագրումը բնագրից գուրս է մնացել՝ այն փոխարինվել է ավելի ընդհանրական «mercator» - «վաճառական» բառով: Այս նպատակի համար 179բ-ի մեջտեղում կիրառվել են տարբեր եղանակներ (ներառյալ՝ հունարեն դարձվածի մեջբերումը, ուր հըշյալ անունը շրջանակել է դարձվածը՝ «ut mihi videt»):

Հնարավոր է, որ գրքի նախապատրաստման և տպագրման ընթացքում Անդրեա Կալվոսի հետ փոխհարաբերութիւնների մեջ ինչ-որ բան

փոխվել է, որի պատճառով էլ նա գրքի տպագրման իր ընթացքում գործը չի կատարել, ուստի և գրքի հաջորդ օրինակներից նրա անունը դուրս է թողնվել:

Արգեն վկայակոչել ենք Սմիթսկամպի այն տեսութունը, թե փոփոխությունները գրաչարանների աշխատանքի անփութության և գիրքը վատ կտրելու արդյունք են: Այսպես՝ շարված էջերը սխալ կտրելու հետևանքով, հաճախ ստիպված են եղել փոփոխելու Ամրոսիոսի գործածած ընթացքը, որպեսզի դրանք տեղավորվեն ավելի փոքր էջում: Սա վկայում է այն մասին, որ այն ժամանակ, գրաչարանները հանուն էջի դասավորության կարող էին ընագիրը փոխելու պահանջ ներկայացնել հեղինակներին, որպեսզի իրենք կարողանան հարմար դասավորել տողերն ու էջերը:

179ր *–tor ipse mihi imposuit. Procurator quippe brevi Papiam e Mediolano reversus, domino opus videndum tradidisse, & in Germaniam properanti consignasse retulit...Cum vero postmodum audivissem Mercatorem ex Germania reversum, ad quartum idus mensis Septembris Mediolanum pergo, & in domum familiariter illum & amice visito. Rogo praeterea ut librum meum restituat. Negotiorum se gestori suo, nescio cui Germano, ex Basilea Frankfordium dixit deferendum dedisse, referendumque ac restituendum postea...* [վերջին նախադասություն] *Et ut antiquos in prae-* [կապ՝ sentia]

180ա էջից սկսած ընագիրը նյութերի օրինակի հետ նույնական է, միայն էջադարձի կապող ընթացք է փոխվել՝ «viventis»-ից դարձել՝ ավելի բարձրաճ «superstiti»: Հարկ է նշել, որ «super»-ը կրճատված է այնպես, որ տառաչափի և բառի լայնքի տարբերություն չկա:

180ա *-sentia ommittam, antiquorumque; monumenta praeteream...* [վերջին նախադասություն] *Quantum tribus aliis Curtiis, & Stephano Ottono, & Andreae Bassignanae, praeceptoribus meis innocentissimis, Mangiariis, Fulpertis, Iacobo Gualae, Gambaranae,* [կապ՝ & superstiti]

180բ *li superstiti adhuc apud nos, li idem Ius fideliter Interpretanti, Boscho debeat, scripta per eum volumina manifestent...* [վերջին նախադասություն] *Nec in ea Caesarei Pontificiique; Iuris parte, quae in actione versatur, Ioannem Petrum Ferrarium, a me praetereundum* [կապ՝ censuerim,]

#### Եզրակացություն.

Introdactio...-ի Մատենադարանի օրինակը, ցավոք, ունի շատ թերություններ, որոնց պատճառով բնագրի հյուսվածքի մեջ Ամրոսիոսի փաստարկները և մեկնարանությունները լիովին հասկանալի չեն: Վերաշարված էջերում առկա տպագրական սխալները մեծապես վնասում են Ամրոսիոսի՝ ասորերենը եվրոպական ընդարձակ լսարանին ներկայացնելու նպատակադրմանը:

Արժե, որ Մատենադարանը ընագրի կամ միկրոֆիլմի տեսքով ձեռք բերի այս գրքի հրատարակության սկզբնական մի օրինակ, որպեսզի լրացված լինեն առկա N 1062 օրինակի թերությունները<sup>7</sup>:

Աղբյուրներ.

Ֆուլաջիլի, Գ. (1949) *Lexicon typographicum Italia, (Florence, 1905) 3rd edition, pp. 292-293.*

Սմիթսկամպ, (1997) *Catalogue of Oriental Incunables.*

Սարոմայեր, Վիրջիլ, (1996) «*The Armenian Manuscripts in the Personal Library of Teseo Ambrogio degli Albonesi*», *Festschrift for the Sixtieth Birthday of Prof. Dora Sakayan, Montreal.*

Վենետիկ (1895) – Գ. Զարպհանալյան, *Պատմութիւն հայկական տպագրութեան. սկզբնավորութենէն մինչև առ մեզ, Վենետիկ, 1895, էջ 33–35:*

Ոսկանյան (1988) – Ն. Ա. Ոսկանյան, Ք. Ա. Կորկոտյան, Ա. Մ. Սավալյան, *Հայ գիրքը 1512–1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտութիւն, Երևան, 1988, էջ 779–780:*

Անգլերենից թարգմանեց՝ Ա. ՄՈՒՐԱԴԹԱՆ  
Խմբագրեց և ծանոթագրեց՝ Գ. ՏԵՐ-ՎԱՐԴԱՆԹԱՆ

7 Այսուհանդերձ այս օրինակում գրքի հայագիտական մասեր ունեցող հատվածներն ունեն առավել քան լիարժեք և բավարար վիճակ – ծան. խմբ.: